# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/192/4 - 26

<<15>> հունիսի 2026թ **ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս**

*Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Է. ՀՈԴԱԲԱՇՅԱՆ*

**«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 4-րդ թաղամաս 5 հասցեից մինչև 62 մանկապարտեզ կոյուղագծի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 69 382.504 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

**Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:**

**Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան**

*« ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 4-րդ թաղամաս 5 հասցեից մինչև 62 մանկապարտեզ կոյուղագծի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր</u>

*Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ «ԷՅՁ-Ի-ԷՅ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Է. ՀՈԴԱԲԱՇՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա :

Նախատեսվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 4-րդ թաղամաս 5 հասցեից մինչև 62 մանկապարտեզ կոյուղագծի վերակառուցման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում, ասֆալտբետոնե ծածկույթի կտրում, ասֆալտբետոնե ծածկույթի քանդում, խրամուղու և փոսորակի մշակում գրունտներում մեխանիզմով և ձեռքով, խրամուղիների և փոսորակների լրամշակում ձեռքով՝ հատակի հարթեցմամբ: Ավելնորդ գրունտի բարձում և տեղափոխում: Ավազի նախապատրաստական շերտի իրականացում, պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում, խրամուղիներում և փորձարկում: Խրամուղու ետլիցք ավազով՝ տոփանումով: Ելքագծերի վերակառուցման աշխատաքների իրականացում: Երկաթբետոնե հավաքովի հորերի տեղադրում: Բետոնե վաքերի պատրաստում, երկաթբետոնե հավաքովի կլոր հորի մոնտաժում, երկաթբետոնե հորերի հատակի սալերի տեղադրում, երկաթբետոնե հորերի ծածկի սալերի տեղադրում ՝թուջե ծանր մտոցով: Մետաղական կոնստրուկցիաների տեղադրում և երկշերտ յուղաներկում:

**Պատերի արտաքին մակերեսների ջրամեկուսացում երկշերտ բիտումային մածիկով:**

**Ասֆալտբետոնի շերտի վերականգնում մանրահատիկ և խոշորահատիկ ասֆալտբետոնե ծածկույթով խճային հիմքով:**

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է՝ **69 382.504** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2427.42** և մեքենաների շահագործման ինդեքսը **2956.69**

Նյութերի արժեքն ընդունված է **2026թ. N 03** «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան*